https://www.voanews.com/middle-east/turkish-drone-power-displayed-nagorno-karabakh-conflict

Turkish Drone Power Displayed in Nagorno-Karabakh Conflict

Թուրքական ԱԹՍ-ների մասնակցությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ

Ըստ Դորիան Ջոնսի

13 հոկտեմբերի 2020 18:08

Տվյալ լուսանկարում, որը վերցված է Ադրբեջանի ՊՆ-ի 2020թ. հոկտեմբերի 1-ին հրապարակված տեսանյութից, անօդաչու թռչող սարքը երևում է Լեռնային Ղարաբաղի տարածքում

Ստամբուլ- Թուրքական արտադրանքի ԱԹՍ-ները զգալի դեր են խաղում Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի հարձակողական պաշարման մեջ: ԱԹՍ-ները Թուրքիայի արտաքին քաղաքականության անբաժան մասն են դարձել, սակայն Թուրքիայի ԱԹՍ-ների արտադությունը հայտնվել է միջազգային հանրության մանրազնին դիտարկման կիզակետում:

Ադրբեջանի ուժերի կողմից կիրառվող Թուրքական արտադրանքի ԱԹՍ-ները էթնիկ հայերի կողմից վիճելի Լեռնային Ղարաբաղի ազատագրման մեջ Ադրբեջանի առաջնագծում են: Հայ անջատողականները Լեռնային Ղարաբաղը վերցրել էին Ադրբեջանից 1990-ականների արյունալի պատերազմի ընթացքում, որը մոտավորապես 30000 հոգու կյանք խլեց:

Թուրքիան խոստացավ աջակցել Ադրբեջանին թեժացող հակամարտության ժամանակ:

Պաշտպանական վերլուծաբան Արդա Մեվուլտողլու խոսքերով հակամարտությունը ընդգծում է Թուրքիայի դերը, որպես խոշոր ԱԹՍ արտադրողի:

<< Թուրքիան կուտակել է ենթակառուցվածքների մշակման և ձևի զգալի փորձ՝ այսպիսի առաջադեմ ԱԹՍ-ների գործում: Միգուցե այն ԱՄՆ-ի ԱԹՍ-ների պես բարդ կառուցվածք չունի, սակայն կարող է հեշտությամբ մրցել Չինաստանի արտադրածների դեմ: Թուրքական ԱԹՍ-ները արագ տեխնոլոգիական առավելություններ են գրանցում,>>—ասաց նա:

Հայաստանը դատապարտում է թուրքական արտադրանքի ԱԹՍ-ների կիրառությունը: Վերջին զեկույցները մեջբերում են հայկական զինուժը որտեղ ասվում է, որ հայկական ուժերը զգետնեցին Ադրբեջանի ԱԹՍ-ը մայրաքաղաք Երևանի հարևանությամբ:

Անօդաչու թռչող սարքի մնացորդները Ստեփանակերտի ծայրամասում, 2020թ.

հոկտեմբերի 11-ի Լեռնային Ղարաբաղի համար մղված զինված ընդհարման ընթացքում:

Անկարան հաստատեց ԱԹՍ-ների կիրառությունը ի աջակցություն սիրիական ապստամբներին և Իրաքի՝ քրդերի դեմ խռովության ժամանակ:

Թուրքական արտադրության ԱԹՍ-ները կարողացան նաև Լիբիայի քաղաքացիական պատերազմում Ազգային Միաբանության կառավարությանը դեպի իր կողմը շրջել:

ՀԻմա ԱԹՍ-ները Անկարայի՝ վերլուծաբանների նկարագրած կոշտ դիվանագիտության անբաժանելի մասն են, ասում է Սինան Ուլգենը՝ Ստամբուլում տեղակայված Տնտեսության և արտաքին քաղաքականության ուսումնասիրության կենտրոնից:

<<ԱԹՍ-ներով զինտեխնիկան Թուրքիայի արտաքին և անվտանգության քաղաքականությունը ավելի կոշտ սպառազինության դաշտ բարձրացրեց: Քանի որ այն՝ ըստ էության, Թուրքիային հնարավորություն ընձեռեց ապավինել տեխնոլոգիական առավելությանը, որը հիմա Թուրքիային թույլ է տալիս միջսահմանային կոնֆլիկտներում մասնակցություն ունենալ, և ավելի քան երբևէ կոշտ սպառազինության հետ հույսեր կապել,>>- շեշտում է նա:

Բայց Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ քաղաքացիական բազում զոհերի փաստը, որում մեղադրվում են թուրքական ԱԹՍ-ները, միջազգային հանրությանը ստիպեց երել թեքել: Կանադան սառեցրել է գլխավոր բաղադրիչների վաճառքը, որը Global Source Partners խորհրդատվական ընկերության քաղաքական խորհրդատու Աթիլլա Յեսիլադայի խոսքերով, կարող է հանգեցնել թուրքական ԱԹՍ-ների ծրագրի խոցելիությանը:

Որոնողական և փրկարար ջոկատների՝ Լեռնային Ղարաբաղի շրջանի համար հակամարտության ընթացքում Ադրբեջանի Գյանջա քաղաքի հրթիռակոծությունից հետո, փլատակների տակից մարմինների դուրսբերումը:

<<Մենք դեռ չենք կարող շարժիչ արտադրել և ,ակնհայտ է, չունենք չիպեր արտադրող գործարան, ուստի ԱԹՍ-ների, ինչու չէ նաև՝ այլ զենքերի ծրագրային ապահովման տարրերը պետք է ներկրենք Արևմուտքից կամ Չինաստանից,>>— շեշտում է նա:

Անկարան դատապարտում է Կանադայի որոշումը:

Սակայն Թուրքիան դեռ կարող է իր դիրքը պահպանել, ասում է վերլուծաբան Մեվուլդոդլուն:

<< Ավելի հեշտ է ստեղծել այլընտրանքային միջոցներ. դա է ԱԹՍ-ների տեխնոլոգիայի միջուկը կամ, կարելի է ասել առեղծվածը, իսկ դրանք օրեցօր էժանանում են և հասանելի դառնում բազում պետություններին,>>- ասում է նա։

Թուրքիան աղոտ տեսանյութով ցույց տվեց ամենահզոր համարվող ԱԹՍ-ը։ ԱԹՍ-ները միտված են ունենալ ոչ միայն կարևոր ռազմական նշանակություն, այլև արտաքին քաղաքականության գործիքի դեր։

Թարգմանությունը՝ Վալենտինա Կարրումի

Ղեկավար՝ Արմենուհի Ավագյան